

Ա Մ Ի Ր Ա

Մարգարան Բ-ի որդին էր նաեւ Ամիրա, որուն մասին բացի Կիրակոս Գանձակեցւոյ սա վկայութեանն ուրիշ ծանօթութիւն չունիմ. «...Գրեգորիէ-խանն, որդի Մարգարանին, եղբայր Ասլանբէկին, Սարգսի և Ամիրային, յաղ-դէ Մամիկոնէից» (էջ 272) :

Հ Ա Մ Լ Ի Կ

Սմբատ Բ-ի որդին էր Համլիկ, որմէ է Սանահինի զաւրթին արծա-նադրութիւնը. «Ի թուին ՈՂԸ (1229) : Անուամբ Աստուծոյ, ես՝ Համլիկ, որ-դի Սմպատա, յաղդէ Համադասպանց...» : Կալուածներ կը նուիրէ և կը խնդ-րէ պատարագ «...չարաթ աւր Համլիանն, կիրակէին Մամքանա...» որ իր ամուսինն է (Յիշատ. 13) : Ուրիշ արձանագրութեան մը մէջ ի Բարձրաքաչի վանք կը յիշատակէ. «ՈՂԸ (1239) ես Համլիկ որդի Սմբատա եւ թոռն Համա-դասպա յաղդէ Մամիկոնեանց կրկին միարանեցա իմ զերեզմանատանս եւ ս-մուսին իմ Մամքան եւ ետու յԱստուածածնիս... (կը յիշէ Կալուածի նուի-րատութիւն) ...եւ հաստատեցի ինձ յիշատակ մատուռն մի զոր յիմ անուն չինեցի եւ ես ինձ հաւրեղբայր իմ Մարգարան (Բ) ... (եւ պատարագ կը ցան-կայ) ...Բ (2) : Մամքանայ...» որ իր կինն է (Յիշատ. թիւ 14) : Դարձեալ իր կենջ հետ կը կանգնէ սիւն մը Բարձրաքաչի եկեղեցւոյն եւ կ'արձանադրէ. «Կանդնեցաւ սիւնս եւ ս(ուր)ը նշանքս յիշատակ Համէկանն (կարդա Համլ-կանն) եւ Մամքանա որք երկրպագէք ասացէք Տ(է)ր Ա(ստուա)ծ ողորմեա նոցա» : Նոյն վանքին ուրիշ մէկ արձանագրութեան մէջ կը կարդանք. «Ես Համլիկ եւ Սադուն կատարեցաք զանդարձ ծնողաց մերոց եւ տուաք... (կալ-ուած) ...Դ (4). աւր պատարագ... Բ (2) Նրճսին եւ Բ (2) Աղուտին...» (Յիշատ. 15) : Չեմ գիտեր թէ այս Համլիկը Սմբատ Բ-ի որդի՞ն է թէ ոչ : Հա-ւանական չըլլայ, քանի որ հոն յիշուած Սադուն մը կայ, եղբայր Համլիկայ, որ այլուստ անծանօթ է եւ երկու յիշեալ տիկիներէրը Նրճս և Աղուտ (Աղութ, Եաղութ), Համլիկի եւ Սադունի ամուսինները ըլլալու են : Մենք գիտենք որ Համլիկ ամուսնացած էր Մամքանի : Գարեգին Եպս. Յովսէփեան թէեւ կը փորձէ այս Համլիկը նոյնացնել Սմբատ Բ-ի որդւոյն հետ, սակայն կ'աւել-ցրնէ. «Թէական կը մնան, մինչեւ նոր աղբիւրներով չպարզուի հարցը» («Խաղբակեանք...», էջ 16) :

Բարձրաքաչի վանքը ուրիշ արձանագրութիւն մը կ'ըսէ. «Ի թուին ՈՂԸ (1246) ... ես որդի Գաւկան յիմ տապանատանէն ի դուռս եկի ի Սա-նահինն եւ միարանեցա Բարձրաքաչիս կամակցութեամբ Գրեգորոս եւ Աս-լանպէկա որդոց Մարծպանա... (եւ վկայութեան կը կոչէ) ...Ասլանպէկա և Գրեգորոս Համլիկա եւ Աշոտ...» (Յիշատ. 26) : Ասլանբէկ եւ Գրեգոր արդէն ծանօթ են իբր եղբայրներ : Համլիկ հաւանաբար ըլլայ Սմբատ Բ-ի որդին, իսկ Աշոտ ուրիշ արձանագրութենէ ծանօթ է իբր «...եւ Աշոտ որդի Գաւուգէ թոռն Աշոտի...» (Յիշատ. 33), որ չեմ կարծեր որեւէ ազգակցութիւն ունե-նայ Դսեղի Մամիկոնեաններուն հետ, թէեւ ուրիշներու նման զործակցած կ'երեւի Բարձրաքաչի վանքին ի նպաստ(5) :

Համլիկայ որդւոց մասին չեմ գտած որեւէ տեղեկութիւն :

(5) Այս Աշոտ Դսեղցին, Ա. Շահինեան ստորագրութեամբ գրութեան մը մէջ, «Մամիկոնեան-Համադասպան Տոմար Հիւսիսային Հայաստանում ԺԲ-ԺԳ Դարերում» խո-րագրով (Լրաբեր, Մարտ, 1968, Երեւան, 84-98), իբր Համադասպան սերունդէն Մամիկոն-